

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 







ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 ԹՎԱԿԱՆ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	27.04.2018 (ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	27.04.2018 (ամսաթիվ)
Բագրատ Ճզմաչյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	27.04.2018 (ամսաթիվ)
Կարեն Սարգսյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	27.04.2018 (ամսաթիվ)
Տիգրան Գալստյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	27.04.2018 (ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	27.04.2018 (ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	27.04.2018 (ամսաթիվ)
Կարեն Հակոբյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	27.04.2018 (ամսաթիվ)

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏՔԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների 2017 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԷԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ ԿԲ նորմատիվային փոփոխությունների արդյունքում ՀՀ բանկային համակարգում ձևավորված մեծ ծավալի իրացվելի միջոցների առկայության և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների կողմից բանկային ծառայությունների մատուցման շրջանակի ընդլայնման արդյունքում ՀՀ բանկային համակարգում մրցակցությունն էլ ավելի խորացավ: Այս պայմաններում իր մարցակցային դիրքը պահպանելու և ամրապնդելու նպատակով 2017 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն իրականացրեց կառուցվածքային փոփոխություններ՝ ստեղծելով Ներդրումային բանկային ծառայությունների և Թվային բանկային ծառայությունների մատուցման դեպարտամենտներն ու ընդլայնելով մատուցվող ծառայությունների շրջանակը: Սկիզբ է դրվել մի շարք նոր ծրագրային ապահովումների մշակմանը:

2017 թվականին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն հաջողությամբ ավարտեց 14.12.2016թ Միացման պայմանագրով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին միացած «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի հետ ինտեգրման գործընթացը:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված ակտիվների և պարտավորությունների մնացորդները ներառում են նաև «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին անցած մնացորդները:

Փաստեր, ցուցանիշներ

+42.4%	2017 թվականի վերջին ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 212.5 մլրդ ՀՀ դրամ, որը 2016 թվականի համեմատ աճել է 42.5%-ով:
+80.2%	2017 թվականի վերջին հաճախորդներին տրված վարկերի մեծությունը կազմել է 119.2 մլրդ ՀՀ դրամ, որը 2016 թվականի համեմատ աճել է 80.2%-ով:
+52.8%	2017 թվականի վերջին Բանկի ընդհանուր պարտավորությունների մեծությունը կազմել է 177.3 մլրդ ՀՀ դրամ, որը 2016 թվականի համեմատ աճել է 52.8%-ով:
+83.9%	2017 թվականի վերջին զուտ շահույթը կազմել է 2.0 մլրդ ՀՀ դրամ, որը 2016 թվականի համեմատ աճել է 83.9%-ով:
+6.1%	2017 թվականի վերջին Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը կազմել է 35.2 մլրդ ՀՀ դրամ, որը 2016 թվականի համեմատ աճել է 6.1%-ով:
+2	2017 թվականի ընթացքում բացվել է 2 մասնաճյուղ: Տարեվերջի դրությամբ Բանկի տարածքային ցանցն ընդգրկել է 61 մասնաճյուղ:

Ֆինանսական ակնարկ

2017 թվականին Բանկը, օգտագործելով իր կողմից կիրառվող բանկային նորագույն տեխնոլոգիաները, ունենալով արհեստավարժ աշխատակիցների թիվ, ապահովեց իր գործունեության կայունությունն ու հիմնական ցուցանիշների դրական դինամիկան, ինչը վկայում է Բանկի գործունեության կայունության, արդյունավետության և ստեղծված իրավիճակում Բանկի կողմից ճիշտ ռազմավարության ընտրության փաստը:


Ակտիվներ


2017թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 212.4 մլրդ ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 42.4%-ով (63.3 մլրդ ՀՀ դրամով):

Այդ թվում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հաճախորդներին տրված վարկերը և այլ փոխառությունները աճել են 80.2%-ով (53.0 մլրդ ՀՀ դրամով), Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները՝ 8.7%-ով (2.3 մլրդ ՀՀ դրամով), Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները կրճատվել են 6.4%-ով (849 մլն ՀՀ դրամով), Դրամական միջոցները և դրանց համարժեքները կրճատվել են 1.5%-ով (573 մլն ՀՀ դրամով), Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվներն ավելացել են 126.4%-ով (3.2 մլրդ. ՀՀ դրամով) և Այլ ակտիվները աճել են 141.9%-ով (1,3 մլրդ. ՀՀ դրամով):

Բանկի ակտիվներին զուգընթաց տեղի է ունեցել նաև ակտիվների կառուցվածքի դրական տեղաշարժ. Ընդհանուր ակտիվների կազմում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն աճել է 4.4 տոկոսային կետով՝ կազմելով 75.7%:

Ստորև բերված գծապատկերներում ներկայացված են նախորդ տասնմեկ տարիների ընթացքում արձանագրված ակտիվների փոփոխությունը և հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների կառուցվածքը.






Վարկեր


2017 թվականի ընթացքում ապահովվել է հաճախորդներին տրված վարկերի ծավալների բնականոն աճ՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդները կազմելով 119.2 մլրդ ՀՀ դրամ: 2016թ ցուցանիշի համեմատ աճը կազմել է 80.2% (53.0 մլրդ. ՀՀ դրամ):

Նախորդ ֆինանսական տարվա համեմատ 2017թ-ին ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալն աճել է 113.7%-ով կամ 22.7 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 42.6 մլրդ ՀՀ դրամ, անհատ ձեռնարկատերերին տրված վարկերի ծավալը՝ 14.3%-ով կամ 1.1 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 8.9 մլրդ ՀՀ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրված վարկերի ծավալը՝ 73.9%-ով կամ 29.6 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 69.6 մլրդ ՀՀ դրամ:


Բանկի վարկային պորտֆելի՝ վերջին տասնմեկ տարիներին փոփոխման դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում.



2017թ վերջի դրությամբ Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ հաճախորդների հետևյալն է՝



2017թ վերջի դրությամբ Բանկի մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը ներկայացված է ստորև՝



Միջազգային վարկային ծրագրեր

Բանկի ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը:

2017 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Բանկն ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB), Եվրասիական Զարգացման Բանկի (EAB), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի, Հարավարևելյան Եվրոպայի Եվրոպական

Հիմնադրամի (EFSE), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), Green for Growth Fund Հիմնադրամի, Incofin Investment Management, DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպության (DEG), responsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), The OPEC Fund for International Development (OFID) ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:


2017թ Բանկը շարունակեց փաստաթղթային գործիքների թողարկումը և կարճաժամկետ վերականգնվող վարկերի տրամադրումը՝ ուղղված ներմուծման և արտահանման գործարքների ֆինանսավորմանը:

«Global Finance» միջազգային հեղինակավոր ամսագրի մասնագիտական ուսումնասիրության արդյունքում, ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ճանաչվել է Հայաստանում 2017թ.-ի «Առևտրի լավագույն ֆինանսավորող» բանկը:

Արժեթղթեր

2017 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց ակտիվ գործունեությունը արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ:

2017 թվականի վերջի դրությամբ արժեթղթերում Բանկի ներդրումային պորտֆելը կազմեց 29.2 մլրդ ՀՀ դրամ, որի կազմում 88.4%-ը ՀՀ պետական պարտատոմսերն են, 11.3%-ը՝ ոչ պետական պարտատոմսերը, իսկ 0.3%-ը՝ կորպորատիվ բաժնետոմսերը:



2017 թվականին Բանկի կողմից արժեթղթերի առաջնային շուկայում կատարված գործառնությունների ծավալը կազմեց 42.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ 157.0 մլրդ ՀՀ դրամ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված եկամուտները, որոնց մեջ ավելի քան 88%-ը կազմում են պետական պարտատոմսերը, կազմել են 687.6 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 378.4 մլն ՀՀ դրամով, կամ 122.3%-ով:

Բանկի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, կարևորելով տնտեսության ֆինանսական հատվածում արժեթղթերի և կապիտալի զարգացած շուկա ունենալու դերը և նշանակությունը, շարունակեց իր ներդրումն ունենալ արժեթղթերի շուկայի ակտիվացման և զարգացման գործում:

2017 թվականի ընթացքում Բանկը թողարկեց և ամբողջությամբ տեղաբաշխեց՝

- ✓ 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 200,000 հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 5.75% եկամտաբերությամբ, 51 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:
- ✓ 1,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 100,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 9.5% եկամտաբերությամբ 24 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:
- ✓ 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 200,000 հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 5.5% եկամտաբերությամբ, 51 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

Ընդ որում, նշված դոլարային պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը կատարվել է նվազեցված 2.25% դրույքաչափով՝ ներկայում գործող արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց ՀՀ դրամով կատարվող պահուստավորման 18% դրույքաչափի փոխարեն, իսկ դրամային պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը կատարվել է նվազեցված 0.0% դրույքաչափով՝ ներկայում գործող դրամով ներգրավված միջոցների դիմաց կատարվող պահուստավորման 2% դրույքաչափի փոխարեն:

2017թ վերջի դրությամբ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կորպորատիվ պարտատոմսերի երկրորդային՝ Bbond հարթակում գնանշվել են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ թողարկման ընդհանուր 12 մլն ԱՄՆ դոլար և 12-րդ թողարկման 400 մլն ՀՀ դրամ անվանական արժեքով կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր, իսկ Abond հարթակում՝ 15-րդ թողարկման 5 մլն ԱՄՆ դոլար և 16-րդ թողարկման 1 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

2017թ ընթացքում պարտատոմսերի երկրորդային շուկայում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկված կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերով իրականացվել է 150 գործարք՝ ընդհանուր 5,263 հազ ԱՄՆ դոլար և 23 մլն ՀՀ դրամ շրջանառության ծավալով:

Հաշվետու տարվա վերջում թողարկված պարտատոմսերի դիմաց Բանկի պարտավորությունը կազմում է 8.7 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 129%-ով կամ 4.9 մլրդ ՀՀ դրամով:

Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսեր

Ներդրումային բանկային ծառայությունների մատուցման շրջանակներում 2017թ. Բանկի կողմից տեղաբաշխվել են հետևյալ ընկերությունների թողարկումները՝

- Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկ՝ 2.0 մլրդ ՀՀ դրամ ծավալով դրամային պարտատոմսեր
- Ֆինքա ՈՒՎԿ՝ 1.5 մլրդ ՀՀ դրամ ծավալով դրամային պարտատոմսեր
- Ֆինքա ՈՒՎԿ՝ 4.0 մլն ԱՄՆ դոլար ծավալով դոլարային պարտատոմսեր
- Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ՝ 100 մլն ՀՀ դրամ ծավալով դրամային պարտատոմսեր
- Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ՝ 500 հազար ԱՄՆ դոլար ծավալով դոլարային պարտատոմսեր

Վերջին երկու թողարկումների դեպքում Հայաստանում առաջին անգամ կիրառվել է ապահովված հիփոթեքային պարտատոմսերի գործիք:

Արտարժույթի առքուվաճառքի գործառնություններ

Տարվա ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել արտարժույթային գործառնություններում: Արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմեցին.

- ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 1.0 տրլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 80.2%-ով
- ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 63.2 տրլն ՌԴ ռուբլի՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 118%-ով
- Եվրոյով գործարքների ծավալը՝ 286.7 մլրդ Եվրո՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 43.2%-ով:

2017թ արտարժույթի առքուվաճառքից ստացված զուտ եկամուտը կազմեց 952 մլն ՀՀ դրամ:

Բանկի որդեգրած՝ դեպի հաճախորդն ուղղված քաղաքականության ներքո Բանկը շարունակեց մրցակցային գնանշումներ իրականացնել արտարժույթային շուկայում:

Միջբանկային վարկեր

Աշխարհաքաղաքական ստեղծված զարգացումների և տնտեսության համակարգային բարձր ռիսկերի պայմաններում Բանկը պահպանել է միջոցների տեղաբաշխման զգուշավոր քաղաքականությունը՝ միջոցները տեղաբաշխելով առավել ցածր ռիսկային և բարձր իրացվելի գործիքներում, այդ թվում՝ միջբանկային վարկերում:

2017թ ընթացքում Բանկը իրականացրել է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների վարկավորում՝ ընդհանուր 3.2 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով:

Պարտավորություններ

2017թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 177.3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 52.8%-ով կամ 5.1 մլրդ. ՀՀ դրամով:

Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների աճը պայմանավորված է Բանկերի նկատմամբ պարտավորությունների 47.3% կամ 1.2 մլրդ ՀՀ դրամ, Հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների 52.4% կամ 32.9 մլրդ ՀՀ դրամ, Ածանցյալ ֆինանսական պարտավորությունների 3.8 անգամ կամ 2.4 մլն ՀՀ դրամ, Թողարկված պարտքային արժեթղթերի 129% կամ 4.9 մլրդ ՀՀ դրամ, Այլ փոխառություններ հոդվածի գծով 46.2% կամ 21.1 մլրդ ՀՀ դրամ, Ընթացիկ հարկային պարտավորությունների 11.8 անգամ կամ 247 մլն ՀՀ դրամ և Այլ պարտավորությունների 90.7% կամ 868 մլն ՀՀ դրամ աճով:


Տարեվերջին Բանկի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 61 մլրդ ՀՀ դրամ կամ պարտավորությունների 34.4%-ը: Բանկի համար մշտապես առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը:

Պարտավորությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները՝ 54% կամ 95.8 մլրդ դրամ, որոնք իրենց մեջ ներառում են իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները, ՀՀ կառավարության և տեղական ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվները, ավանդները և փոխառությունները:

Հաճախորդների ընթացիկ հաշիվներում և ավանդներում նախորդ ֆինանսական տարվա համեմատ զգալիորեն ավելացել են ինչպես ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները՝ համապատասխանաբար 68.1 և 73.9%-ով կամ 15 մլրդ և 4 մլրդ ՀՀ դրամով, այնպես էլ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ ավանդները 22.6% և 48.7%-ով կամ 3 մլրդ և 8.8 մլրդ ՀՀ դրամով:

Պարտավորությունների կազմում զգալիորեն աճել են նաև Բանկի կողմից թողարկված արժեթղթերով ներգրավված միջոցները՝ 129%-ով կամ 4.9 մլրդ ՀՀ դրամով՝ տարվա վերջի դրությամբ կազմելով 8.7 մլրդ ՀՀ դրամ կամ Պարտավորությունների 4.9%-ը:


Բանկի ընդհանուր պարտավորությունների դինամիկան վերջին տասնմեկ տարիների ընթացքում պատկերված է ստորև.



Սեփական կապիտալ


2017թ վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 35.2 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.0 մլրդ ՀՀ դրամով կամ 6.1%-ով: Նախորդ տարվա համեմատ Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է Չբաշխված շահույթի 13% (2 մլրդ ՀՀ դրամ) աճով:

Բանկի սեփական կապիտալի փոփոխությունն ըստ տարիների արտացոլված է ստորև.



2017թ կապիտալի աճի արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 19,966 ՀՀ դրամ՝ 2016թ ցուցանիշի համեմատ աճելով 6.1%-ով՝ 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքի պարագայում:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի դինամիկան տարիների ընթացքում պատկերված է ստորև բերված գծապատկերում.



Եկամուտներ և ծախսեր

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 16 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 48.9%-ով կամ 5.3 մլրդ ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի գծով ստացված տոկոսային եկամուտների՝ 4.9 մլրդ ՀՀ դրամ կամ 62.9% և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված տոկոսային եկամուտների՝ 468.9 մլն ՀՀ դրամ կամ 24.3% աճով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքում հաճախորդներին տրամադրված վարկերից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 79.6% նախորդ տարվա 72.8%-ի համեմատ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը՝ 14.9% նախորդ տարվա 17.9%-ի համեմատ, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 3.5% նախորդ տարվա 5.2%-ի համեմատ: Արդյունքում 2017 թվականին տոկոսային և նմանատիպ եկամուտներն ունեցել են առավել դիվերսիֆիկացված կառուցվածք:

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 8.5 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 47.9%-ով կամ 2.7 մլրդ ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ ծախսերի աճը պայմանավորված է հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 2.3 մլրդ ՀՀ դրամ կամ 94.9%, այլ փոխառությունների դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 369 մլն ՀՀ դրամ կամ 13.1%, ռեպո գործառնությունների գծով կատարված տոկոսային ծախսերի 5 մլն ՀՀ դրամ կամ 8.8% և բանկի կողմից թողարկված պարտատոմսերի դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 62 մլն ՀՀ դրամ կամ 23.2% ավելացմամբ: Միևնույն ժամանակ, բանկերից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսային ծախսերը նվազել են 3 մլն ՀՀ դրամ կամ 2.0%-ով:

Տոկոսային և նմանատիպ ծախսերի համեմատ Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճի առաջանցիկ տեմպի արդյունքում 2017 թվականին ավելացել են բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները 2.5 մլրդ ՀՀ դրամով կամ 50.2%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 1.4 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 31.5%-ով կամ 330 մլն ՀՀ դրամով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է վճարահաշվարկային ծառայություններից ստացված կոմիսիոն եկամուտների՝ 226 մլն ՀՀ դրամ կամ 31.9%, պլաստիկ քարտերի սպասարկումից ստացված կոմիսիոն եկամուտների՝ 95 մլն ՀՀ դրամ կամ 28.2% և երաշխիքների և ակրեդիտիվների գծով ստացված կոմիսիոն եկամուտների 9 մլն ՀՀ դրամ կամ 266.9% աճով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 744 մլն ՀՀ դրամ՝ աճելով 33.1%-ով կամ 185 մլն ՀՀ դրամով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է պլաստիկ քարտերով իրականացված գործառնությունների համար վճարված կոմիսիոն վճարների 100 մլն ՀՀ դրամ կամ 21.9%, վճարահաշվարկային ծառայությունների դիմաց վճարված կոմիսիոն վճարների 66 մլն ՀՀ դրամ կամ 93.3% և ֆոնդային բորսայի ծառայությունների դիմաց վճարված կոմիսիոն վճարների 30 մլն ՀՀ դրամ կամ 28 անգամ աճով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերի համեմատ Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների աճի առաջանցիկ տեմպի արդյունքում 2017 թվականին աճել են Բանկի կողմից ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները 146 մլն ՀՀ դրամով կամ 29.7%-ով:

Ոչ տոկոսային եկամուտների աճին նպաստել են Բանկի կողմից մատուցվող մի շարք ծառայությունների, մասնավորապես՝ արտարժույթի առք ու վաճառքի, արժեթղթերով գործառնությունների, այլ ընկերությունների պարտատոմսերի տեղաբաշխման գործարքների, արագ դրամական փոխանցումների, կոմունալ վճարումների, ապահովագրական պոլիսների վաճառքի, տրանսպորտային պոլիսների վաճառքի, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների վաճառքի ցուցանիշների գծով գրանցած զգալի աճը:

Հաշվետու տարվա ընթացքում մասնաճյուղային ցանցի ընդլայնման և Բանկի աշխատողների թվաքանակի ավելացման, ինչպես նաև Բանկի աշխատողների աշխատավարձերի բարձրացման հետևանքով անձնակազմի գծով կատարված ծախսերը կազմել են 3.3 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 42.1%-ով կամ 975 մլն ՀՀ դրամով:

**Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Բանկի եկամուտների և ծախսերի
դինամիկան նախորդ երկու տարիների կտրվածքով**

Հազար ՀՀ դրամ	2017թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	16,054,673	10,775,508
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(8,468,210)	(5,724,914)
Զուտ տոկոսային եկամուտներ	7,586,463	5,050,594
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,380,266	1,049,827
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(743,711)	(558,934)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտներ	636,555	490,893
Զուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից	1,004,975	447,979
Զուտ օգուտ/(վնաս) ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ներդրումներից	(78,917)	206,214
Վաճառքի համար մատչելի արժեթղթերից զուտ օգուտ	687,645	309,293
Այլ գործառնական զուտ եկամուտներ	197,047	321,775
Արժեզրկումից կորուստներ	(704,196)	(1,265,280)
Անձնակազմի գծով ծախսեր	(3,288,348)	(2,313,515)
Գույքի արժեզրկում	(880,871)	-
Մաշվածություն և ամորտիզացիա	(687,095)	(429,722)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,850,775)	(1,437,422)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	2,622,483	1,380,809
Շահութահարկի գծով ծախս	(618,097)	(291,334)
Տարվա շահույթ	2,004,386	1,089,475

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ

Շահութաբերության գործակիցներ և շահաբաժիններ

Հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 2.0 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.

Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 5.9%,

Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 1.1%:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 1,138.4 ՀՀ դրամ:

Բանկի մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը տարեվերջի դրությամբ կազմել է 19,966 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 5,000 ՀՀ դրամ:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշի հարաբերակցությունը (P/E ratio) կազմել է 17.54:

2017 թվականին 2016 թվականի 1,089,475 հազ ՀՀ դրամ շահույթից շահաբաժիններ չեն վճարվել: 2016թ. կուտակված շահույթից 300,000 հազ ՀՀ դրամ ուղղվել է պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ մնացած շահույթը՝ որպես չբաշխված շահույթ մնացել է բանկում՝ նպաստելով կապիտալի աճին:

Ներքին հսկողական համակարգ

Ներքին հսկողության համակարգը Բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է:

Բանկի ներքին հսկողության համակարգի գլխավոր նպատակը Բանկի գործունեության ու որոշումների կայացման գործընթացների նկատմամբ արդյունավետ հսկողության ապահովումն է:

Այդ, իսկ նպատակով Բանկում ներդրված է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ և հսկողական գործառույթներ, այդ թվում՝ ռիսկերի գնահատման հիման վրա բանկի Ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման, աուդիտի իրականացման և հետստուգումային հսկողության (Follow up) գործառույթ:

Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան Բանկում ներդրված Ներքին աուդիտի գործառույթն ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված Բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Նշվածի ներքո հաշվետու տարվա ընթացքում Ներքին աուդիտի կողմից՝ Տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն իրականացվել են ռիսկերի վրա հիմնված Բանկի տարբեր գործարար գործընթացների, տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համալիր ու նպատակային ստուգումներ և ուսումնասիրություններ:

Ստուգումների և ուսումնասիրությունների նպատակն է եղել Ներքին առաջին կողմից գնահատելու բանկում ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը:

Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Բանկում ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2017թ. ստեղծվեց Վարկային ռիսկերի կառավարման հանձնաժողով, ինչպես նաև մշակվեց և հաստատվեց «Ռիսկի ախորժակի սահմանման» քաղաքականությունը:

Վճարահաշվարկային գործառնություններ

Բանկը հաճախորդների դրամական փոխանցումների սպասարկման որակը բարձրացնելու և գործընթացը դյուրացնելու նպատակով շարունակել է զարգացնել համագործակցությունը Unistream, MoneyGram, Ria Money Transfer, Anelik, Xpress Money, Intel Express, Sigue, MoneyTun և Converse Transfer արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ՝ նորանոր անակնկալներ մատուցելով հաճախորդներին և տարվա ընթացքում երեք անգամ պարգևատրվելով միջազգային արագ դրամական փոխանցումների բարձրակարգ սպասարկման համար:

Արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ համագործակցության շրջանակներում Բանկի հաճախորդները հնարավորություն ստացան օգտվելու վերջիններիս կողմից կատարվող լավագույն առաջարկներից և ակցիաներից, ինչպիսիք են Moneytun դրամական փոխանցումների համակարգով դեպի Չինաստան՝ շահառուների UnionPay քարտերին գումարներ փոխանցելու, Intel Express համակարգով դեպի նշված երկրներ նվազեցված սակագներով փոխանցումներ կատարելու, կանադական դոլարով փոխանցումների համար նվազեցված սակագներից օգտվելու առավելությունները:

Համագործակցության խորացման արդյունքում Բանկը հաշվետու տարում կարողացավ հաճախորդներին առաջարկել մատչելի սպասարկման սակագներ՝ շուկայում ապահովելով մրցակցային կայուն դիրքեր: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի մասնաբաժինը հայաստանյան արագ դրամական փոխանցումների շուկայում 2017թ կազմել է 8%:

Բանկի կողմից առաջարկվող արագ դրամական փոխանցումների տարբեր համակարգերի լայն ընտրության շնորհիվ մեր հաճախորդները ներկայում հնարավորություն ունեն փոխանցումներ կատարելու և ստանալու փոխանցումներ աշխարհի ցանկացած երկրից, որտեղ գործում են արագ դրամական փոխանցումների համակարգեր:

Արագ դրամական փոխանցումներից օգտվող հաճախորդների շրջանում աճեց նաև բանկի ARARATTRANSFER ակումբի անդամների թիվը: ARARATTRANSFER բոնուսային ծրագրի շրջանակներում միջազգային արագ դրամական փոխանցումներից օգտվող առավել ակտիվ

հաճախորդներին առաջարկվում են մի շարք արտոնություններ, այդ թվում՝ գեղջեր փոխանցումներ իրականացնելիս, անհատական պահատեղերից օգտվելիս, արտոնյալ փոխարժեք և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի քարտապաններին առաջարկվող գեղջային համակարգից օգտվելու հնարավորություն:

Բանկում կիրառվող մրցունակ սակագների և սպասարկման բարձր որակի շնորհիվ 2017թ ապահովվել է SWIFT համակարգով փոխանցումների ծավալի աճ, ներգրավվել են նոր հաճախորդներ: 2017թ SWIFT փոխանցումների 100%-անոց որակ ապահովելու համար ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ, վեցերորդ անգամ անընդմեջ, արժանացել է եվրոպական առաջատար բանկերից մեկի՝ գերմանական Commerzbank AG-ի «Որակի գերազանցություն (Excellent STP Quality Award)» մրցանակին: 2017թ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ դրամական փոխանցումների բարձր որակն ապահովել է փոխանցումների արագ մշակման ավտոմատ համակարգի կատարելագործման և առավելագույն կարճ ժամկետում փոխանցումները շահառուներին հասանելի դարձնելու շնորհիվ:

Պլաստիկ քարտեր


2017թ Բանկն ակտիվորեն շարունակեց բանկային համակարգում պլաստիկ քարտերի թողարկման ծավալների ավելացման, ձեռք բերված դիրքերի պահպանման և ամրապնդման միջոցառումներն ու քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների վերաբերյալ հանրությանը տեղեկացման լայնածավալ աշխատանքները: Մասնավորապես՝

➤ 2017 թվականին ընդլայնվեց Բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը՝ հասնելով 1,313-ի:


➤ Զարգացվեց և ընդլայնվեց քարտերի սպասարկման ենթակառուցվածքը: Հաշվետու տարվա վերջի դրությամբ ավտոմատ գանձման մեքենաների քանակը կազմեց 124 հատ, POS տերմինալների քանակը՝ 1,785 հատ:

➤ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր հաճախորդների համար մշակել է նոր ծառայություն՝ USSD-բանկինգ, որի միջոցով հաճախորդը ցանկացած պահին բջջային հեռախոսի միջոցով կարող է ստուգել իր քարտերի մնացորդները, ստանալ քաղվածք կամ անհրաժեշտության դեպքում բլոկավորել քարտը:

2017թ վերջի դրությամբ Բանկի թողարկված վճարային քարտերի կառուցվածքը՝ ըստ վճարային համակարգերի, ներկայացվում է ստորև.



Բանկը, թողարկած քարտերի քանակով, ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է Բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և նորարար ծրագրերի իրականացմամբ: 2017թ վերջի դրությամբ Բանկի կողմից թողարկված քարտերի քանակը կազմել է 148,310 հատ:



Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ինտեգրումը, էլեկտրոնային առևտրի ծավալների շարունակական աճը, անկանխիկ գործառնությունների տարածումը՝ Բանկն առանձնակի կարևոր է համարում շարունակաբար ավելացնել միջազգային պլաստիկ քարտերի (Visa, MasterCard) թողարկման ծավալները, ինչպես նաև, օգտագործելով Բանկի՝ Հայաստանում Diners Club միջազգային վճարային համակարգի բացառիկ ներկայացուցիչը լինելու հանգամանքը, Բանկը շարունակելու է իրականացնել բազմատեսակ ծրագրեր՝ հանրությանն առավելագույնս իրազեկում Diners Club քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների մասին:

Մեր աշխատողները

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ գործունեության հաջողությունը պայմանավորված է աշխատողների բարեխիղճ ու նպատակասլաց աշխատանքով, ուստի Բանկը մշտապես արժևորում է յուրաքանչյուր աշխատողի ներդրումը Բանկի զարգացման գործում:

Կարևորելով աշխատողների մասնագիտական և անձնական զարգացումը՝ Բանկն աշխատողների համար ստեղծում է հավասար հնարավորություններ յուրաքանչյուր աշխատողի ներդրման արդարացի գնահատման, նախաձեռնության խթանման, թիմի ձևավորման համար: Բանկի ղեկավարությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործման, առաջխաղացման և մոտիվացման գործընթացին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2017 թվականի ընթացքում, Բանկի ղեկավարությունն իր ուշադրության ներքո է պահել անձնակազմի

մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը, մոտիվացմանը (խրախուսման, առաջխաղացման և այլն) վերաբերող ցանկացած հարց:

ՀՀ բանկային համակարգում մրցունակ անձնակազմ ձևավորելու նպատակով Բանկը պարբերաբար վերանայում է անձնակազմի բնագավառը կարգավորող ներքին իրավական ակտերը, որոնցով ներդրվում են միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակված անձնակազմի հավաքագրման, մրցույթների կազմակերպման, վերապատրաստման և ատեստավորման համակարգեր: Նշված համակարգերը նպաստում են աշխատողների վերաբերյալ ընդունվող ցանկացած որոշման արդարության և թափանցիկության մակարդակի բարձրացմանը:

Բանկի ղեկավարությունը, գնահատելով աշխատողների մոտիվացման կարևորությունը, 2017թ ընթացքում շարունակեց իր լավագույն աշխատողների հրապարակային խրախուսման և մոտիվացման միջոցառումները:

Բանկում առանձնակի ուշադրություն է դարձվում նաև նոր ընդունվող աշխատողների մասնագիտական բարձր պատրաստվածությանը և նրանց համապատասխանությանը Բանկի ներքին բիզնես մշակույթին:

Բանկում, հաշվի առնելով անձնակազմի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման անհրաժեշտությունը, հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են Բանկի անձնակազմի մասնագիտական պատրաստվածության բարելավմանն ուղղված ներքին և արտաքին վերապատրաստման թվով 57 ծրագրեր:

Այս ամենի արդյունքում Բանկի ամբողջ անձնակազմը պատրաստակամություն է ցուցաբերում Բանկի ղեկավարության կողմից առաջ քաշված խնդիրների կարգավորման, սահմանված նպատակների իրականացման, ինչպես նաև Բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ թիրախների ապահովման գործում:

Բանկի աշխատողի կերպարի հիմնական բնութագրիչ է դիտվում մասնագիտական գիտելիքների, ունակությունների, համապատասխան որակների և գործարար վարվելակերպի համարժեք զուգակցումը:

Բանկը, պահպանելով կառավարման դասական գործընթացները, միաժամանակ ներմուծում է կառավարման այնպիսի մոդելներ, որոնք նպատակաուղղված են կոլեկտիվի համախմբմանը՝ նրա նպատակների ու խնդիրների իրականացման գործում:

Անձնակազմի կառավարման գործառույթներում մեծացել է Balanced Scorecard /BSC/ կամ ցուցանիշների հաշվեկշռված համակարգի /ՑՀՀ/ ներդրման դերը, այն իրենից ներկայացնում է Բանկի աշխատողների թիրախային ցուցանիշների սահմանում և կանոնակարգում ինչպես առանձին աշխատողների, այնպես էլ ստորաբաժանումների մակարդակով:

Չնայած այն հանգամանքին, որ անձնակազմի համալրման և վարչական հարցերը շատ ժամանակատար են՝ Բանկի անձնակազմի կառավարման քաղաքականությունում առանձնակի կարևորություն և ուշադրություն է դարձվում տաղանդների կառավարմանը, թիմի մոտիվացմանը, Բանկին բնորոշ արժեքների համակարգի և կորպորատիվ մշակույթի ձևավորմանը:

Տարածքային գործունեություն

Բանկը, մշտապես առաջնորդվելով իր հաճախորդի կողքին լինելու, խորհրդատվություն տրամադրելու, արդյունավետ և օպտիմալ լուծումներ առաջարկելու, գործունեության աշխարհագրության շարունակական ընդլայնման և զարգացման քաղաքականությամբ, 2017թ ընթացքում շարունակեց իր տարածքների ընդլայնման քաղաքականությունը, որի արդյունքում Բանկն ավելացրեց իր մասնաճյուղային ցանցը թվով 2 նոր մասնաճյուղերով՝ մասնաճյուղերի թիվը հասցնելով 61-ի՝ 59-ը ՀՀ տարածքում և երկու մասնաճյուղ ԼՂՀ-ում: «Զարգացման հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու արդյունքում Բանկի մասնաճյուղային ցանցն ընդլայնվել է թվով 10 նոր մասնաճյուղերով՝ ՀՀ բանկային համակարգում մասնաճյուղային ցանցի մեծությամբ դառնալով երրորդ խոշորագույն բանկը:

2017թ ընթացքում Բանկի գործող մասնաճյուղերում, կադրերի որակավորման բարձրացման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման նպատակով, միջոցներ են հատկացվել մի շարք մասնաճյուղերի կապիտալ վերանորոգման և տեխնիկական վերազինման համար, որի արդյունքում բարելավվել են Բանկի աշխատակազմի աշխատանքային, ինչպես նաև հաճախորդների սպասարկման պայմանները, նվազել է մեկ գործառույթի և մեկ հաճախորդի սպասարկման ժամանակի տևողությունը: Մասնաճյուղերում կադրերի որակավորման նպատակով՝ յուրաքանչյուր ամիս Բանկի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներ իրականացրել են համապատասխան սեմինար պարապմունքներ:

Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնման ծրագիրը կրելու է շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով ընդլայնել Բանկի գործունեության աշխարհագրությունը և մոտեցնել Բանկի սպասարկումն ու ծառայությունները հաճախորդների առավել լայն զանգվածի:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2017 թվական	2016 թվական
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	2,004,386	1,089,475
Սեփական կապիտալի միջին մեծություն	34,142,962	27,801,097
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	5.9	3.9
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	2,004,386	1,089,475
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	180,834,325	140,613,080
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.1	0.8
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	2,004,386	1,089,475
Գործառնական եկամուտ	10,033,768	6,826,748
Զուտ շահույթի մարժա (NPM), %	20.0	16.0
Գործառնական եկամուտ	10,033,768	6,826,748
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	180,834,325	140,613,080
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	5.5	4.9
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	180,834,325	140,613,080
Սեփական կապիտալի միջին մեծություն	34,142,962	27,801,097
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.3	5.1
Զուտ տոկոսային եկամուտ	7,586,463	5,050,594
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	133,578,551	97,025,581
Զուտ տոկոսային մարժա (NIM)	0.06	0.05
Տոկոսային եկամուտ	16,054,673	10,775,508
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	133,578,551	97,025,581
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	12.0	11.1
Տոկոսային ծախսեր	8,468,210	5,724,914
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	175,098,287	114,936,493
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	4.8	5.0
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	2,004,386	1,089,475
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	1,760,731	1,337,077
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), դրամ	1,138.4	814.8
Սպրեդ, %	7.2	6.1

Բանկի հետագա զարգացման նկարագիրը

Բանկի հեռանկարային զարգացման խնդիրները նպատակաուղղված են լինելու ձեռք բերված դրական միտումների շարունակականության ապահովմանը: Բանկն առաջնահերթ կարևորում է հաճախորդների հետ փոխշահավետ համագործակցության պահպանումն ու ընդլայնումը: Այդ նպատակով՝ Բանկն առավել մատչելի կդարձնի մատուցվող սպասարկումներն ու ծառայությունները՝ հաճախորդներին առաջարկելով ֆինանսական ծառայությունների բավարարման ամբողջական փաթեթային լուծումներ:

Բանկի զարգացման կարևոր բաղադրիչներից է միջազգային գործընկեր ֆինանսական կառույցների հետ համագործակցության ընդլայնումը՝ նպատակ ունենալով ապահովելու բանկային ծառայությունների և սպասարկումների որակի համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին և բանկային ինովացիոն պրոդուկտների ներդրումն ու Բանկի մրցունակության մակարդակի բարձրացումը:

Ապագա ժամանակահատվածում առաջադրված խնդիրները պայմանավորված են Բանկի առջև դրված նպատակներով և դիտարկվում են գործունեության որակական բնութագրիչներով ու ֆինանսատնտեսական ցուցանիշների աճի մակարդակով: Հիմնական խնդիրների շարքում կարևորվում են.

- ✦ մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացումը,
- ✦ ներդրումային բանկային ծառայությունների զարգացումը (Investment Banking),
- ✦ թվային բանկային ծառայությունների զարգացումը (Digital Banking),
- ✦ անձնակազմի կառավարման քաղաքականության ներքո համապատասխան ներքին իրավական ակտերի մշակումը և ներդրումը,
- ✦ կառավարման ապակենտրոնացումը,
- ✦ բիզնես գործընթացների արդյունավետության բարձրացումը,
- ✦ հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի (CRM) զարգացումը,
- ✦ բաժնետոմսերի առաջնային հանրային տեղաբաշխման իրականացումը (IPO)
- ✦ սպասարկման որակի շարունակական բարելավում,
- ✦ Բանկի ներքին հսկողության գործառույթների շարունակական բարելավում,
- ✦ ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների արդյունավետ կառավարում:

Ֆինանսատնտեսական ցուցանիշների մասով Բանկը կանխատեսում է ապահովել.

- ✦ Բանկի ընդհանուր ակտիվների աճ,
- ✦ ընդհանուր կապիտալի աճ,
- ✦ միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների շարունակական աճ,
- ✦ վարկային պորտֆելի դվերսիֆիկացիա և ապակենտրոնացում,
- ✦ ոչ տոկոսային եկամուտներ գեներացնող ծառայությունների աճ,

Արդյունքում, վերը բերված ցուցանիշների աճի պայմաններում կարճաժամկետային նաև զուտ շահույթի աճ: